ԹԱՄԱԴԱ.– Հրամանքդ ո՞ր աշխարհքից ես:

ՆԱԶԱՐ.– Նազարստան աշխարհքից, Նազարաշէն քաղաքից:

ՄԻ ԾԵՐՈՒՆԻ.– Նազարաշէն քաղաքի՞ց: Հա՛, գիտե՛մ: Իմ պապիս քաղաքն էր:

Ա ՀԻԻՐ.– Ձանըմ, մի իմացէք, տեսէք ո՞վ է,

Բ ՀԻԻՐ.– (Իր կողքինին) Մի իմացի ո՞վ է:

Շարունակ բոթելով մեկմեկու եւ երբեմն մի քանի մարդ մէջ տալով՝ հարցնում են «ո՞վ է», մինչեւ հասնում են Տէրտէրին, որ նստած է Նազարի կողքին:

ՎԵՐՁԻՆԸ.– (Տէրտէրին) Տէրտէր, մի իմացի ո՛վ է, ինչ մարդ է:

ՏԷՐՏԷՐ.– (Մտիկ տալով Նազարի դրօշակին եւ կարդալով՝ սարսափում է: Ապա դիմելով վերջին հարցնողին՝ կիսաձայն.)

Անյաղթ Նազար, քաջն Նազար,
Մին կզարկի՝ ջարդի հազար:

ՎԵՐՁԻՆ ՀԱՐՑՆՈՂ.– (Իր կողքինին, սա էլ հերթով մինչեւ Ա հիւրին:)

Անյաղթ Նազար, քաջն Նազար,
Մին կզարկի՝ ջարդի հազար:

ԹԱՄԱԴԱ.– Հը՛մ…

ԲՈԼՈՐԸ.– Հը՛մ…

ՆԱԶԱՐ.– (Հազում է:)

ՍԱՔՈ.– (Ներս է մտնում մռայլ ու հպարտ:)

ՀԻԻՐԵՐ.– Օհո՛, Սաքո՛, բարո՛վ, Սաքո՛, համեցէ՛ք:

ՍԱՔՈ.– (Լուրջ) աստծու բարին:

ԹԱՄԱԴԱ ԵՒ ՄԻՒՍՆԵՐԸ.– Համեցէք, նստի, Էս ո՞ր քամին քեզ բերեց:

ՍԱՔՈ.– Կացէ՛ք մի, խիստ բեզարած եմ:

ՀԻԻՐԵՐ.– Ձիդ ո՞րտեղ է:

ՍԱՔՈ.– (Նստելով եւ խոր շունչ քաշելով) Էս է, Էնքան զօրքը խոտի պէս հարել թափել էի ոտիս տակ. Էդ անտէր ձին տակիս չոքեց: Ոտով եմ եկել:

ՀԻԻՐԵՐ.– Վահ, կռիւ կա՞ր:

ՍԱՔՈ.– Սուս կացէք, մի ղիամաթ էր, որ կուռս ղադարեց: Պահ, Էդքան ջարդել կըլնի :

ԹԱՄԱԴԱ.– Հլա մի հաց անուշ արա… այ տղա, էդ ինչե՞ր ես ասում: